կտակելէ յետոյ կը գրէ. «Դարձեալ յիշեցէք...զհաւն իմ զհանգուցեալ Միքայէլ քաջ հռետորն արհի որ էր սթոռակալ սբ. Էջմիածնայ, և միւս հգր. ծնողքն իմ զյոհան, և զպետրոս արհի եպիսկոպոսքն որ էին առաջնորդք սբ. ուխտին նախավկային, և համշիրակ մեծարգոյ եղբայրն իմ զմաղաքիա վարդապետն որ է տեղեաւ Շամբեցի։ Դարձեալ յիշեցէք զմարմնաւոր ծնողքն իմ. զհանգուցեալ Ներսէսն, և զմայրն իմ Սառէն և հօրեղբայրն հանգուցեալ զտէր մարգարէն և մարմնաւոր եղբարքն անանիէն եւ զհանգուցեալքն զղազարն և զղուկասն և անանիէի որդիքն զտէր մարգարէն և զաւետիսն և քորքն իմ հանգուցեալ շուշանն եւ եփրոսինէն, և զհոգեւոր ծնողն իմ ջուղայեցի Մինասի դուստրն նանաջանն որ պատճառ եղեւ և իւր հոլով արդեամբքն յոյսամ ամի ընդ իւր առեալ տարեաւ ի սբ. յեմ. համբուրելով ի լուսաբուխ սբ. գերեզմանն, Աստ իւրեան վարձն հատուցանէ . . . թվ. ՌՃԽԶ. (=1697). (ՅԱ. էջ 49)։ Նախիջեւանցի Նիքոլա Մանուզարեանի մօտ գտնուած և Ստեփանոս Նախավկայի վանքին սեփական ձեռագիր ՌՃԾԴ (=1705) թուականը կրող Յայսմաւուրքի յիշատակարանին մէջ արձանագրուած են վերոյիշեալ Գալուստ վրդ.ի՝ ինչպէս նաև անոր համշիրակ եղբօր՝ Մաղաքիա վրդ.ի՝ անունները, յիշուած առաջնորդներու անուններու հետ. նոյն յիշատակարանէն դատելով կը հասկցուի որ Ս. Յակոբի վանքը այցելող Գալուստ վրդ.ը և իր համշիրակը եպիսկոպոսական աստիճան ունին. (Հ. Հայրենեաց. գիրք Դ)։

ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ. ՓԱՓԱԶԵԱՆ.— 1874ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի. ինքնագիր և թարգմանածոյ ոտանաւորներ ունի «Սիօն» ամսագրին մէջ (1875. էջ 120)։

ԳԱՍՊԱՐ ԱՄԻՐԱ ՄՈՒՐԱՏԵԱՆ.— 1767ին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Սիմէոն կթղ. Երևանցիի կողմէն Երուսաղէմ Գասպար ամիրային կը գրուի հետեւեալ կերպով. «Եւ զի գնացեալ էր Երուսաղէմ գրեաց զշնորհաւորութիւն և հրաւիրեաց ի դառնալն գալ ի Ս. Աթոռ.» (Դիւան Գիրք Գ. էջ 751)։ Նոյն թուականին կը գրուի նաև Յարութիւն Ամիրային. որ նոյնպէս ուխտաւորութեամբ այցելած էր Ս. Յակոբի վանքը։ (Անդ. էջ նոյն)։

ԳԱՍՊԱՐ ԱՄՈՒՃԱՅ ՍԵԲԱՍՏԱՅԻ.— Պկ. Յովհաննէս Կոլոտի